եթէ իցէ յստակ և մաքուր 'ի ամենայն լրոյ պատերազմական։

ԳԼՈՒԽ ՅԻԳ.

Ամենայն շրջապատեալ քաղաքի և ամրոցի բնակիչք եթէ զինուոր և եթէ հասարակ ժողովուրդ, յետ շրջապատելոյ մերոյ մինչև հնգետասան աւուր ժամանակի ունի արձակութիւն անձամբ ընտանեօք ընչօք ելանել 'ի քաղաքէն և ամրոցէն թշնամեաց մերոց 'ի դրունս, եթէ հաստուցանիցէ մեզ միայն տասանորդս հանեալ ընչից իւրոյ, և յինքն մնալով մեզ պանդուխտ ազատապէս ելցէ կալով մնասցէ ազատ 'ի յերեսս երկրի մերոյ ուր և կամեցի, և յետ խաղաղութեան նոյն պատերազմի կրկին ազատ լիցի, եթէ կամի ելանել ընչօք առ սեպհական աշխարհն իւր, եթէ յաւելի քանթէ հնգետասան աւուր՝ պարտ է ստանալ հրաման 'ի զօրագլխէ շրջապատողէ և ապա ելանել, յայնժամ զօրագլուխն ունի արձակութիւն տալոյ հրաման և կամ խնայելոյ, եթէ տացէ հրաման, հարկադրեսցի ելանողին հաստուցանել 'ի հանեալ ստացուածոց տասնէն երկու և կամ երիս զամենայն ըստ խոստման ժամանակի, որպէս 'ի վեր վասն ժամանակի հնգետասան աւուր ելանողաց։

ԳԼՈՒԽ ՅԻԴ.

Մի երբէք գերեսցի էգս 'ի բնութենէ մար-